# ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾԱԿՑՄԱՆԸ

13.10.2021 12:44

Հարգելի փաստաբաններ,

Տեղեկացնում ենք, որ Եվրոպայի խորհուրդը Իրավաբանների Եվրոպական Ասոցիացիայի հետ համատեղ, «Իրավաբանի մասնագիտության ամրապնդումը Եվրոպական չափորոշիչներին համապատասխան» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում, կազմակերպում է միջոցառում նվիրված փաստաբանների երրորդ գործակցմանը, որը յուրահատուկ հարթակ կլինի Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի փաստաբանների համագործակցության համար:

Միջոցառումը ներառում է «Վեճերի լուծման այընտրանքային մեխանիզմներ՝ դատարանների բեռը թեթևացնելու և այդպիսով արդարադատության հասանելիությունը բարելավելու համար» վերտառությամբ զեկույցների ներկայացման ինքնուրույն բաժիններ, ուր իր մասնակցությունն է ցուցաբերելու նաև ՀՀ փաստաբանների պալատը:

Միջոցառումը տեղի կունենա **2021 թվականի հոկտեմբերի 16-ին, ժամը 10:00-14:00 (Կենտրոնական Եվրոպական ժամանակով)**: Գրանցումը և ծրագրի վերաբերյալ հավելյալ տեղեկությունները հասանելի են հետևյալ հղումներով՝

- ռուսերեն լեզվով https://twinningoflawyers.eu/ru/home-ru/,

- անգլերեն լեզվով www.twinningoflawyers.eu:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })